ՍՄԲԱՏ Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՌԱՖԱՅԷԼ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Թ. դ. վերջ — Ժ. դ. առաջին քառորդը Բագրատունեաց Հայաստանի համար բախտորոշ դէպքերով հարուստ մի ժամանակաշրջան էր։ 885թ. վերականգնուեց Հայաստանի պետականութիւնը, ապա որոշ ժամանակ անց սկսուեց պայքար անկախութիւնը պահպանելու համար, որը ծանր զոհողութիւնների գնով աւարտուեց յաղթանակով։

Նշուած ժամանակաշրջանը ընդգրկում է Բագրատունի առաջին երեք թագաւորների գահակալութեան տարիները, Աշոտ Ա-ից մինչեւ Աշոտ Բ., 885—929։

Իւրաքանչիւր թագաւորի գահակալումը կազմում է առանձին մի փուլ, որը արտաքին քաղաքականութեան մէջ բնորոշ է միայն իրեն յատուկ կողմերով։ Աշոտ Ա-ը, 862թ. իշխանաց իշխանի պաշտօնը ստանձնելուց մինչեւ իր թագաւորութեան վերջը (885ից մինչեւ 890) Խալիֆայութեան հանդէպ վարել է զգուշ քաղաքականութիւն, առիթ չտալով որ արաբական զօրքերը ներխուժեն Հայաստան, ինչպէս եղաւ 851—52 թթ., Բուղայի արշաւանքի ժամանակ։ Միաժամանակ նա անշեղօրէն նախապատրաստում էր Հայաստանի անկախութեան վերականգնումը, որին նա հասաւ 885թ.։ Արտաքուստ լոյալ ցոյց տալով խալիֆի հանդէպ, նա այնքան հզօրացրեց Բագրատունիների իշխանութիւնը երկրում, որ խալիֆը ստիպուած եղաւ նրան ճանաչելու Հայաստանի թագաւոր։

Աշոտ Ա-ի արտաքին քաղաքականութիւնը, նրա դիւանագիտական հմտութիւնը եւ պետական գործիչի շնորհքը մանրամասն վերլուծուած են պատմագրութեան մէջ եւ կարիք չկայ այստեղ նորից անդրադառնալու այդ հարցին[1]։ Մեր ուսումնասիրութեան խնդրից բխում է, սակայն, նշել նրա դիւանագիտական ճկունութիւնը. Խալիֆայութեանը թշնամանալու առիթ չտալով, Աշոտ Ա. իշխանաց իշխանը օգտագործեց Բիւզանդական կայսրութեան գործօնը, դիւանագիտական շփումներ ունեցաւ կայսեր եւ պատրիարքի հետ, չզիջելով իր երկրի շահերը (մասնաւորապէս մերժելով քաղկեդոնութիւնը պարտադրելու փորձերը), նա կայսրութիւնից ստացաւ Հայաստանի պետականութեան ճանաչումը, որը ամրապնդեց նորելուկ Հայոց թագաւորութեան դիրքը որպէս միջազգային իրաւունքի

սուբյէկտ։ Ժ. դարի պատմիչ Յովհաննէս Դրասխանակերտցին գրում է «Այլ եւ մեծ Կայսրն Յունաց՝ Բարսեղ, ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան եւ նուաճութեան եւ սիրոյ հաստատէր ընդ արքային մերոյ Աշոտոյ՝ որդի սիրելի զնա անուանելով եւ հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս տէրութեան իւրոյ»[2]։

ԺԳ. դարի պատմիչ Վարդան Արեւելցին, օգտուելով նախորդ դարերի աղբիւրներից, իր հերթին գրում է, որ ամիրապետը «... զուարթ սրտիւ առաքէ թագս եւ հանդերձս եւ երիվարս։ Զնոյն եւ կայսրն Վասիլ առաքէ եւ օրհնէ զթագն տէր Գէորգ...»[3]։

890թ. Աշոտ Ա.ին յաջորդեց որդին՝ Սմբատ Ա. Բագրատունին (890–914)։ Սմբատ Ա.ը սկզբնապէս շարունակեց հօր գիծը եւ պահպանեց լոյալութիւնը Խալիֆայութեան հանդէպ, բայց միքանի տարի անց դրութիւնը փոխուեց եւ յարաբերութիւնները արաբների հետ խիստ թշնամացան։ Պատճառը՝ Սմբատ Ա.ի արտաքին քաղաքականութեան մէջ կատարուած շրջադարձն էր՝ բացայայտ կողմնորոշումը դէպի Բիւզանդիա։ Դրասխանակերտցին գրում է. «Բայց Սմբատայ... նախ ըստ հայրենի կարգացն ուխտի ոչ զատէր զինքն 'ի սիրընթաց մտերմութենէ կայսերն Հռոմոց Լեւոնի՝ ընծայիւք բազմօք եւ նուիրական պատարագօք զնա մեծարեալ ըստ հեզահամբոյր հանդարտութեան իւրոյ։ Վասն որոյ եւ Կայսր ոչ եթէ փոքր ինչ քան թէ մեծամեծս նմա ընձեռէր պարգեւս եւ պատիւս գեղեցիկ զինուց... եւ ըմպակս եւ բաժակս, եւ կամարս ականակապս 'ի համակ ոսկւոյ... զի որդի սիրելի Կայսր զՍմբատ իւր անուանէր՝ սիրալիր դաշամբք ուխտից»[4]։

Սմբատ Ա.ի «դաշամբք ուխտից»ը խիստ անհանգստացրեց խալիֆի փոխարքայ՝ Ատրպատականի ամիրա Աւշինին. նա կասկածեց, որ Սմբատ Ա.ը կարող է «եղծանել հատանել փութայր զկապ միաբանութեան սիրոյ նոցա», այդ պատճառով պատրաստուեց մեծ զօրքով մտնել Հայաստան։ Սմբատ Ա.ը կարողացաւ հարթել միջադէպը բանակցութիւնների միջոցով. նա համոզեց ոստիկանին, որ իր «սէրը» կայսեր հետ օգտակար է արաբներին, որ այն խալիֆի եւ Աւշինի վաճառականներին ճանապարհ է բացում դէպի կայսրութիւն եւ հնարաւորութիւն տալիս շահաւէտ առեւտրին։ Աւշինը հաշուի առնելով հայկական բանակի ուժը, ստիպուած եղաւ զիջել ու, պատիւներ փոխանակելով Սմբատ Ա.ի հետ, վերադարձաւ Ատրպատական[4]։

Ինչպէս երեւում է պատմիչի վկայութիւնից, Սմբատ Ա.ը խալիֆի փոխարքայի հետ ունէր «կապ միաբանութեան սիրոյ», այսինքն դաշինք, որը կարգաւորում էր Հայոց թագաւորութեան եւ Ատրպատականի ամիրաների քաղաքական յարաբերութիւնները։ Նման մի դաշինք Սմբատ Ա.ը կնքեց բիւզանդական կայսեր հետ։ Դրանով սկսուեց նրա թշնամութիւնը

արաբների հետ։ Սմբատ Ա.-ը ի հարկէ, շատ լաւ հասկանում էր եւ նախատեսում էր արաբների արձագանգը կայսեր հետ կնքած «սիրալիր դաշամբք ուխտից»ի հանդէպ, բայց այնուամենայնիւ, գնաց այդ քայլին։

Խալիֆի փոխարքայի խիստ բացասական վերաբերմունքը Սմբատ Ա.-ի եւ կայսեր «սիրալիր դաշամբք ուխտից»ի նկատմամբ վկայում է, որ վերջինս տարբերւում էր Աշոտ Ա.-ի եւ կայսեր «պայման խաղաղութեան եւ նուաճութեան եւ սիրոյ»ից։ Անկասկած, Սմբատ Ա.-ի «Սիրոյ ուխտը» կայսեր հետ շատ աւելի ձեռնտու էր կայսրութեանը եւ շատ էր հեռանում Աշոտ Ա.-ի եւ կայսեր դիւանագիտական յարաբերութիւններից։

Ի՞նչն էր պատճառը։ Հասկանալու համար Սմբատ Ա.-ի շրջադարձը դէպի Բիւզանդական կայսրութիւն, պէտք է պարզել անկախացած Հայաստանի իրաւական կարգավիճակը Բիւզանդական միջազգային իրաւունքի տեսանկիւնից։

Չնայած 885թ. վերականգնուել էր Հայաստանի անկախութիւնը, դեռեւս պահպանւում էին Խալիֆայութիւնից Հայոց թագաւորութեան կախուածութեան որոշ պարագաները (գործօնները)։ Հայաստանը Խալիֆայութեանը պարտաւոր էր վճարել հարկ, Ատրպատականի ամիրաները— որպէս խալիֆի փոխարքաներ Արմինիայում — վերահսկում էին Հայաստանի եւ ամբողջ Արմինիայի լոյալութիւնը (հաւատարմութիւնը) խալիֆին (այդ պատճառով էլ Ատրպատականի ամիրաները համարւում էին «ոստիկան Հայոց, Վրաց եւ Աղուանից»)[6]։ Որոշ դէպքերում, խալիֆի պահանջով Բագրատունի թագաւորները պարտաւոր էին ռազմական օգնութիւն ցոյց տալ խալիֆին (ինչպէս եղաւ Սաջեան Եուսուֆ ամիրայի ապստամբութեան ժամանակ)։ Բայց ամէնակարեւոր պարագան, որ դեռեւս կապում էր անկախացած Հայաստանը արաբական իշխանութեան հետ՝ Բագրատունի թագաւորների գահակալութեան իրաւունքների de jure ճանաչումն էր խալիֆների կողմից. իւրաքանչիւր նոր թագաւոր թագը ստանում էր խալիֆից։ Ճիշդ է, Բագրատունիների դիրքը Հայաստանում այնպիսին էր, որ նրանք փաստացի (de facto) ժառանգաբար զբաղեցնում էին գահը, այնուամենայնիւ, նրանց թագաւորական իշխանութիւնը իրաւական տեսանկիւնից պէտք է ճանաչուէր նաեւ խալիֆի կողմից (թագ ուղարկելու միջոցով)։ Չնայած այդ ճանաչումը ըստ էութեան, ձեւական բնոյթ էր կրում, այդուհանդերձ նպաստաւոր պարագաներում արաբները (խալիֆան կամ նրա փոխարքան) կարող էին իրենց de jure ճանաչման իրաւունքը օգտագործել որպէս պատրուակ Հայաստանի ներքին գործերին միջամտելու, իրենց ցանկալի թեկնածուին գահին նստեցնելու համար։ Այդպէս եղաւ 908թ., երբ խալիֆան հայոց թագաւոր ճանաչեց Գագիկ Արծրունուն[7]։

Այդ սահմանափակումները մատնանշում են հայ պետականութեան

կարգավիճակը, նրա դիրքը որպէս միջազգային իրաւունքի սուբյէկտ, գերիշխան պետութիւն։

Անկախ է այն պետութիւնը, որը գերիշխան է։ Գերիշխանութիւնը պարունակում է երկու պարտադիր պայման՝ տուեալ իշխանութեան գերադասութիւնը երկրի ներքին կեանքում եւ՝ անկախութիւն միջազգային յարաբերութիւններում։ Գերադասութիւն երկրի ներքին կեանքում՝ Բագրատունիները ձեռք էին բերել մինչեւ թագաւորութեան հռչակումը (առանձնապէս այն համահայկական բնոյթ ստացաւ 862–885թթ.)...։ Բայց երկրորդ պայմանի հարցը շատ աւելի բարդ էր։ Դրասխանակերտցու տեղեկութիւններից երեւում է, որ դեռեւս Ժ. դարի սկզբին, Սմբատ Ա.-ի գահակալութեան շրջանում, Հայաստանի ինքնուրոյն արտաքին քաղաքականութիւնը խոչընդոտւում էր Խալիֆայութեան կողմից։ Վերը ասուեց, որ Սմբատ Ա.-ի «սիրալիր դաշամբք ուխտից»ը կայսեր հետ խիստ անհանգստացրեց արաբներին, բայց թագաւորին յաջողուեց կանխել ռազմական ընդհարումը։ Սակայն միքանի տարի անց Հայոց թագաւորի եւ կայսր Լեւոն Իմաստասէրի միջեւ երկրորդ անգամ կնքուեց «սէր» եւ «ուխտ միաբանութեան», կայսրը Սմբատին ճանաչեց «իբրեւ որդի սիրելի անքակտութեամբ ընդ նմա բերելով ուխտ միաբանութեան սիրոյ», իսկ Սմբատը ճանաչեց կայսրին «իբրեւ վեհագունի քան զինքն եւ հօր հարազատի»[8]։ Բնական հարց է առաջ գալիս՝ ինչ կարիք կար նորից «ուխտ միաբանութեան» կնքել, եթէ այդպիսին արդէն կնքուած էր տարիներ առաջ։

Տրամաբանական է ենթադրել, որ երկրորդ «ուխտը» աւելի զարգացնում էր եւ խորացնում հայ թագաւորի քաղաքական կապը կայսեր հետ։

Դրասխանակերտցու մէջբերուած վկայութիւններից երեւում է, որ Ժ. դարի սկզբին Հայաստանի գերիշխանութիւնը սահմանափակ էր. Խալիֆայութիւնը չէր ընդունում ինքնուրոյն արտաքին քաղաքականութիւն վարելու նրա իրաւունքը, Սմբատ Ա.-ի «ուխտը» կայսեր հետ դիտւում էր որպէս խալիֆի եւ Հայոց թագաւորի յարաբերութիւնների («կապ միաբանութեան սիրոյ») խախտում։

Այսպիսով, Հայաստանի պետականութիւնը, Բագրատունի առաջին երկու թագաւորների օրօք (885–914) ենթակայ էր նախկին գաղութատէրի՝ Խալիֆայութեան որոշ վերահսկողութեանը։ Առաւել ցայտուն դա արտայայտւում էր գերիշխանութեան երկրորդ բաղադրիչի՝ ինքնուրոյն արտաքին քաղաքականութիւն վարելու իրաւունքի սահմանափակման մէջ։

Սահմանափակ գերիշխանութեամբ անկախ պետութիւնը պատմա–իրաւագիտական գրականութեան մէջ կոչւում է dominion։ Այդ փուլը

անցել են անկախութիւն ձեռք բերած շատ երկրներ, ինչպէս միջնադարում, այնպէս էլ նոր դարաշրջանում։

Ճիշդ է, Աշոտ Ա-ը հասաւ նրան, որ Հայաստանը դարձաւ միջազգային իրաւունքի սուբյէկտ, նրա անկախութիւնը ճանաչեց Բիւզանդիան։ Բայց դա քիչ էր, անհրաժեշտ էր կատարել յաջորդ քայլը՝ ազատուել դոմինիոնի կարգավիճակից։ Դրան էր ձգտում Սմբատ Ա-ը՝ ամրապնդել Հայաստանը որպէս անկախ պետութիւն, միջպետական յարաբերութիւնների լիարժէք անդամ, ազատուել Խալիֆայութիւնից կախուածութեան վերջին գործօններից եւ ձեռք բերել լիարժէք գերիշխանութիւն։

Յայտարարելով իրեն կայսեր «որդի սիրելի», եւ ընդունելով նրան որպէս «հօր հարազատի», Սմբատ Ա-ը դառնում էր Բիւզանդիայի դաշնակիցը, բայց այդ դէպքում խզւում էին դաշնակից կապերը խալիֆի հետ։

Ինչպէ՞ս ընդունեց հայ ֆէոդալական աւագանին իր թագաւորի արտաքին քաղաքականութեան կտրուկ շրջադարձը։ Դրասխանակերտցու վկայութիւններից պարզ երեւում է, որ իշխանների մի մասը չընդունեց թագաւորի նոր կողմնորոշումը, շատերը գերադասեցին պահպանել լոյալութիւնը — չէզոքութիւնը արաբների հանդէպ։ Դրանց թւում էին Սմբատ Ա-ի մօտ կանգնած ազդեցիկ ազնուականներ՝ սպարապետ Աշոտ Շապուհեանը, Սիւնեաց գահակալ Գրիգոր–Սուփանը եւ այլք։ Նրանք գնացին Դուին եւ «անձնատուր» եղան ոստիկան Եուսուֆին[9]։

Այդպէս վարուեցին նաեւ շատ այլ իշխաններ. պատմիչը գրում է, որ Նիգ գաւառում վճռական ճակատամարտից առաջ (Ձկնավաճառի ճակատամարտ) Սմբատը, «զգացուցեալ ոմանց զդրժող դաւաճանութիւնն, ապա եւ նա եւս տագնապելով ստիպեալ դումարէ զօր բազում...»[10]։

Այդ փաստերը մատնանշում են, որ Սմբատ Ա-ի բիւզանդական կողմնորոշման պատճառով նրա վասալ իշխաններից շատերը, այդ թւում եւ բաւական ազդեցիկ, գերադասել են պահպանել չէզոքութիւն՝ Խալիֆայութեան հանդէպ։ Նրանց «հաւատարմութիւնը» արաբներին, ներկայանալը Եուսուֆ ոստիկանին՝ պատմաբան–բանասէրները, առանց բացառութեան, որակում են որպէս դաւաճանութիւն, այնինչ դա քաղաքական կողմնորոշման խնդիր էր. նրանք գտնում էին, որ արաբների հետ պէտք է շարունակել աւանդական չէզոք գիծը։ Այդպէս պէտք է հասկանալ Աշոտ սպարապետի եւ միւս ֆէոդալների քայլը։ Դա ոչ թէ դաւաճանութիւն էր, այլ տակտիկական քայլ, որն իր տեսանկիւնից էր հաշուի առնում ազգային պետութեան շահերը։ Աշոտ Շապուհեանի խմբաւորումը ցոյց էր տալիս խալիֆին, որ չի դրժում «միարանութիւն սիրոյ»ն արաբների հետ, որը հաստատուել էր դեռեւս Աշոտ Ա-ի օրօք։ Այսպիսով, Ժ. դարի սկզբին, Սմբատ Ա. Բագրատունու բիւզանդամէտ քաղաքական

կողմնորոշման հետեւանքով ֆէոդալական միջավայրում առաջացան երկու խմբաւորում, իւրաքանչիւրը իր դիրքորոշմամբ. Սմբատ Ա.ի խմբաւորումը եւ նրան հակառակուողը՝ Աշոտ Շապուհեանի գլխաւորութեամբ։

Ո՞ր կողմնորոշումն էր ճիշդ։

Դէպքերի զարգացումը ցոյց տուեց, որ Աշոտ սպարապետի գիծը աւելի էր համապատասխանում տուեալ պահի շահերին։

Յիշենք, որ Ժ. դարի սկզբին շարունակւում էր Բիւզանդական կայսրութեան Մակեդոնական–Հայկական հարստութեան ուժեղ մրցակցութիւնը Արաբական խալիֆայութեան հետ Փոքր Ասիայում։ Հայաստանը, որը Արմինիա փոխարքայութեան գլխաւոր երկիրն էր, ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունէր Բիւզանդիայի համար։ Հետեւաբար, Բիւզանդիայի համար շատ տրամաբանական եւ արդարացուած քայլ էր ճանաչել Հայաստանի անկախութիւնը։ Իսկ Հայաստանի համար Բիւզանդիայի դիւանագիտական օժանդակութիւնը շատ կարեւոր էր. դա մի ազդեցիկ գործօն էր ստիպելու արաբներին՝ զիջումներ կատարել։

Աշոտ Ա.ը դիւանագիտական կապ հաստատեց կայսրութեան հետ, օգտագործեց բիւզանդական գործօնը Խալիֆայութեան դէմ, որը ձգձգում էր անկախութեան ճանաչումը։ Բայց միաժամանակ Աշոտ Ա.ը, նոյնիսկ թագաւորելուց յետոյ, ամէն կերպ խուսափում էր բարդացնել յարաբերութիւնները արաբների հետ. նա գիտակցում էր, որ արաբները պատեհ առիթով կարող են ետ վերցնել տուածը եւ վերացնել Հայոց թագաւորութիւնը։ Մերձեցումը բիւզանդական կայսրութեան հետ կը ստեղծէր այդպիսի առիթ, ուստի Աշոտ Ա.ը դրսեւորեց իր դիւանագիտական հմտութիւնը՝ պահպանեց լոյալութիւնը Խալիֆայութեան հանդէպ, բայց միաժամանակ դիւանագիտական կապ հաստատեց Բիւզանդիայի հետ։ Եւ դա շատ ճիշդ քաղաքականութիւն էր։

Սակայն Սմբատ Ա.ը հրաժարուեց հօր քաղաքականութիւնից եւ բռնեց բացայայտ բիւզանդամէտ դիրք։ Նրա արհամարհանքը Խալիֆայութեան հանդէպ այն աստիճան առաջ անցաւ, որ ձերբակալեց Դուինի արաբ երկու «գլխաւորք»ներին (ոստիկաններին) եւ շղթայակապ ուղարկեց Լեւոն կայսեր մօտ[11]։ Բայց նա շատ առաջ անցաւ եւ շատ շտապեց։ Ըստ երեւոյթին նա գտնում էր, որ Խալիֆայութիւնը առաջուայ ուժեղ պետութիւնը չէ, Բիւզանդիան յաջողութեամբ առաջ է շարժւում Փոքր Ասիայում (յիշենք զօրավար Կուրկուասի յաղթանակները)։

Ուստի Սմբատ Ա.ը կարծեց, որ ժամանակը նպաստաւոր է ազատուելու արաբական վերահսկողութեան վերջին գործօններից եւ հասնել լիիրաւ անկախութեան։ Բայց իշխանների մի որոշակի մասը համամիտ չէր այդպիսի շրջադարձի հետ, նրանք գտնում էին, որ դեռեւս վաղաժամ

է բացայայտ դուրս գալ արաբական իշխանութեան դէմ։ Նրանց քայլը՝ «հնազանդութիւն»ը Եուսուֆ ոստիկանին, միայն արտաքինից է նմանւում դաւաճանութեանը. իրականում դա քաղաքական կողմնորոշման հարց էր։

Ո՞ր գիծն էր ճիշդ՝ պէտք է ցոյց տար ժամանակը։ Դէպքերի ընթացքը ցոյց տուեց, որ այդ պահին աւելի ճիշդ էր Աշոտ Շապուհեանի խմբաւորման գիծը։ Սմբատ Ա-ի առճակատումը Խալիֆայութեան հետ աւարտուեց նրա պարտութեամբ։ Նիզ գաւառի Զկնավաճառի վճռական ճակատամարտում նրա զօրքը պարտութիւն կրեց, իսկ դրանից յետոյ երկիրը ենթարկուեց սարսափելի աւերածութիւնների։ Ճիշդ է, նրա պարտութեանը նպաստեց ուտիացիների դաւաճանութիւնը[12], բայց պակաս դեր չխաղացին նաեւ իր շտապողականութիւնը եւ Բիւզանդիայից ակնկալւող օգնութիւնը որ չեկաւ։ Արդարեւ, Բիւզանդիան ճանաչել էր Հայաստանի պետականութիւնը. դաշինք էր կնքուած երկու պետութիւնների միապետերի միջեւ, որը ենթադրում էր նաեւ ռազմական օգնութիւն։ Եւ Սմբատ Ա-ը դիմեց օգնութեան համար, բայց չստացաւ։ Սմբատ Ա-ը մնաց մէնակ թշնամու հսկայական բանակի դէմ, իսկ նրա բանակը առաջուայ ուժը չունէր, որովհետեւ Վասպուրականի, Սիւնիքի, Աշոտ Շապուհեանի զօրքերը այլեւս նրա հետ չէին։ Նա դա հաշուի չառաւ եւ պարտուեց, չնայած նրա բանակը քաջարի կռուեց։

Հետեւանքները եղան շատ ծանր Հայաստանի համար՝ Սմբատ Ա-ը զոհուեց, երկրում առաջ եկաւ անիշխանութիւն մինչեւ Աշոտ Բ. Երկաթի յաղթանակները եւ նրա թագաւորութեան ամրապնդումը։

Վերը շարադրուածից կարելի է եզրակացնել հետեւեալը. Սմբատ Ա-ի միակողմանի կողմնորոշումը դէպի Բիւզանդիա վաղաժամ էր եւ չարդարացրեց իրեն։ Բիւզանդիան չնայած ճանաչել էր Հայաստանի անկախութիւնը, բայց իր հերթին որոշ պայմաններ էր դնում, որոնք մերժւում էին հայերի կողմից[13]։

* * *

Ժ. դարի սկզբի հայ–բիւզանդական քաղաքական յարաբերութիւնների ընթացքը հանրագումարի բերելուց առաջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ սկզբունքային մի հարցի։

Վերջին երկու տասնամեակներում երեւան է եկել նոր վարկած, ըստ որի Բիւզանդիան Աշոտ Ա. Բագրատունուն թագ չի ուղարկել։ 1975թ. հրատարակած յօդուածում, բիւզանդագէտ Կ. Եուզբաշեանը գրում է, որ Աշոտ Ա.-ին թագ ուղարկելու տուեալները բխում են ուշ շրջանի հեղինակներից, մինչդեռ ժամանակին մօտիկ պատմիչները, որոնք մանրամասն խօսում են նշանակների մասին, բիւզանդական թագի մասին լռում են։ Հեղինակը նկատի ունի Վարդան Պատմիչի վերը բերուած հաղոր-

դումը՝ Վասիլ Ա. կայսեր կողմից Աշոտ Բագրատունուն թագ ուղարկելու մասին։ Աւելին, Վարդանի հաղորդումը, որ Վասիլ կայսրը, իրեն համարելով Արշակունի շառաւիղ, Աշոտ Ա.-ից թագ է խնդրել, համարւում է ֆանտաստիկ։

Ստացւում է այն տպաւորութիւնը, եզրակացնում է Կ. Եուզբաշեանը, որ Աշոտ Ա.-ի ստացած բիւզանդական թագին վերաբերուող հաղորդումներն ուշ շրջանի ենթադրութիւններ են, որոնք առաջացել են արաբական թագերի յիշողութիւնների ազդեցութեամբ։ Նոյն կերպ պէտք է արժեքաւորել պատմիչ Ստեփանոս Օրբելեանի պնդումը, իբր Աշոտ Բ.-ին Կ. Պոլսից հայրենիք ուղարկելուց առաջ Ռոմանոս Լեկապենոս կայսրը նրան պսակել է թագով, եթէ առհասարակ «թագ կապեալ» դարձուածքը պէտք է հասկանալ բառացի։ Սակայն անկախ նրանից, թէ հայոց թագաւորին բիւզանդական թագ շնորհուել է թէ ոչ՝ պետականութեան վերականգնումը Հայաստանում կատարուել է կայսրութեան գիտութեամբ եւ նրա գործօն մասնակցութեամբ։ Այս վերջին միտքը հիմնաւորելու համար վկայուած է պատմիչ Ստեփանոս Տարօնեցի Ասողիկի մի արտայայտութիւնը, որ Աշոտ Բ. Բագրատունին թագաւոր դարձաւ Վասիլ Ա. կայսեր «կամակցութեամբ»[14]։ Նոյն տեսակէտը Կ. Եուզբաշեանը կրկնել է 1988թ. ռուսերէն հրատարակած Թ.—ԺԱ. դդ. հայ—բիւզանդական յարաբերութիւններին վերաբերուող մենագրութեան մէջ[15]։

Կ. Եուզբաշեանի առարկութիւնները Վասիլ Ա. կայսեր ուղարկած թագի կապակցութեամբ ընդունելի չեն։ Այդ մասին մենք արդէն մասնակի դիտողութիւններ ենք արել նախկինում[16]։ Նախ, Կ. Եուզբաշեանը աչքաթող է անում, որ Վարդանի Պատմութիւնը հաւաքածոյ է իր նախորդ եւ ժամանակակից պատմիչների աշխատութիւններից՝ սկսած Ե. դարի պատմիչ Մովսէս Խորենացուց մինչեւ ԺԳ. դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցի։ Նա օգտուել է նաեւ Ժ.—ԺԲ. դդ. պատմիչների երկերից՝ Դրասխանակերտցու, Ասողիկի, Մատթէոս Ուռհայեցու պատմութիւններից[17] (ընդ որում Ուռհայեցին իր հերթին օգտուել է Ժ.—ԺԱ. դդ. աղբիւրներից), ուստի Վարդանի աշխատութիւնը Բագրատունեաց շրջանի համար Ժ.—ԺԱ. դդ. աղբիւրի արժէք ունի։ Պէտք է նաեւ նշել, որ տուեալ հարցում Ասողիկի տեղեկութիւնը ակնյայտօրէն միակողմանի է. յատկապէս տարօրինակ է, որ ժամանակով մօտ լինելով դէպքերին, նա գրում է Լեւոն կայսեր «կամակցութեան» մասին (այս դէպքում Կ. Եուզբաշեանը այդ բառը ընդունում է բառացի իմաստով՝ որպէս Բիւզանդիայի գործօն մասնակցութեան ապացոյց, չնայած այդպիսի «գործօն» մասնակցութեան մասին խօսք լինել չի կարող), իսկ խալիֆի թագի մասին լռում է։ Բացի այդ, Կ. Եուզբաշեանը աչքաթող է արել նաեւ դէպքերին ժամանակակից մի աղբիւր՝ Շապուհ Բագրատունուն վերագրուող Պատ-

Աթենի տաճարի որմնանկարի ուրուագիծ. կենտրոնում Սմբատ Բագրատունին եւ նրա որդի Աշոտը

մութիւնը, որի հեղինակը ապրել է Թ. դարի վերջում Ժ. դարի սկզբին։ Այս պատմիչը գրում է «Եւ մեռաւ Աշոտ Բագրատունի եւ թագաւորեաց տանն Հայոց Սմբատ, որդի Աշոտոյ··· Եւ կապեաց նմայ թագ արքայն Հոռոմոց Ռոմանոսն եւ սիրէր զնա յուժ»[18]։

Միւս ժամանակակից աղբիւրն է Դրասխանակերտցու Պատմութիւնը։

Բաւական ընդարձակ պարբերութեամբ նկարագրելով Սմբատ Ա. եւ Աշոտ Բ. թագաւորների եւ բիւզանդական կայսրերի փոխանակած նուէրները, հայ թագաւորների ստացած պատիւները, Դրասխանակերտցին նրանց թւում յիշատակում է «կամար ականակապ»ը։ Սմբատ Ա.-ին տուեց «··· կամարս ականակապս ի համակ ոսկոյ», իսկ Աշոտ Բ.-ը, Կ. Պոլսից հայրենիք մեկնելուց առաջ, կայսր Կոստանդինից նոյնպէս ստացաւ «կամար ականակապ»[19]։ Մինչ այսօր պատմագիտութեան եւ բանասիրութեան կողմից փորձ չի արուել պարզելու, թէ ի՞նչ էր իրենից ներկայացնում պատմիչի նշած ականակապ կամարը։ Լռելեայն ենթադրուել է, որ դա թանկարժէք քարէ զարդ է։

Ի հարկէ, կամարաձեւ ականը (քարը) զարդ էր, բայց նրա տեղը արքայական պատիւ—նշաններում պարզւում է բիւզանդական կայսերական նշանակների հետ համեմատելու շնորհիւ։ Բիւզանդական տաճարների, պալատների որմնանկարներում պատկերուել են կայսրերն ու կայսրուհիները։ այդպիսիներից են՝ Յուստինիանոսի, Ալեքսանդրի (Ժ. դարի սկիզբ), Կոստանդին Ծիրանածինի, Կոստանդին Մոնոմախոսի, Ալեքսէյ Կոմնենոսի, Նիկեփոր Գ. Վոտանիատոսի (1078), Իրինա կայսրուհու (ԺԲ. դար) պատկերները։ Կիրառական արուեստի, մանրանկարների միջոցով յայտնի են Ռոմանոս Ժ. (փղոսկր, Ժ. դար), Միքայէլ Է. Դուկասի (Խախուլի տրիպտիխ, ԺԱ. դար), թագադիր պատկերները[20]։ Նրանց թագի ձեւը բոլորովին տարբեր է հայկական թագի ձեւից, ինչպիսին է օրինակ Գագիկ Արծրունու թագը Աղթամարի տաճարի քանդակներում, կամ Կիլիկիայի հայկական թագաւորութեան գահակալների՝ Լեւոն Բ.ի, Լեւոն Դ.ի թագերը։

Թագերի տարբերութիւնը ակնյայտ է. հայկականը ունի ատամնաւոր վերնամաս, ատամներ կան ծայրերին եւ կենտրոնում։ Բիւզանդական թագը ատամներ չունի, հարթ կամ թոյլ կորագծով վերնամաս ունի, իսկ ճակատամասի կենտրոնում դրուած է կամարաձեւ զարդ։ Այդ զարդը առաւել պարզ երեւում է Նիկեփոր Վոտանիատոսի, Յուստինիանոսի, Իրինայի, Միքայէլ Դուկասի, Կոստանդին Մոնոմախոսի թագերի վրայ։

Ինչ վերաբերում է Բագրատունի թագաւորներին, ապա հայկական որմնանկարներում եւ մանրանկարներում նրանց պատկերները բացակայում են (առ այսօր յայտնի չեն), յայտնի է Գագիկ Ա.ի արձանը Անիից եւ Սմբատ Բ.ի բարձրաքանդակը Հաղբատի Ս. Նշան եկեղեցում։ Բայց նրանք պսակուած են արաբական չալմաներով։ Չալման այն թագն է, որը խալիֆը 885ին շնորհեց Աշոտ Ա.ին եւ Հայաստանի գահակալները այն հագնում էին հանդիսաւոր դէպքերում։ Նրանք ունէին նաեւ հայկական թագ, նման Գագիկ Արծրունու թագին։

Սակայն, բարեբախտաբար, պահպանուել է Սմբատ Ա.ի որմնանկարը Աթէնի (Վրաստան) Սիոն եկեղեցում։ Եկեղեցին Է. դարի կառոյց է, իսկ նկարը կատարուել է Ժ. դարի սկզբին։ Դա խմբակային նկար է, որտեղ պատկերուած են Սմբատ Ա. հայոց թագաւորը, Աբխազաց թագաւոր Կոստանդինը, Սմբատի դուստրը (որի անունը յայտնի չէ), մանկահասակ թագաժառանգ Աշոտը (914ից՝ Աշոտ Բ. Երկաթ թագաւոր) եւ Կոստանդնի որդի Գէորգին, որին կնութեան էր տրուած Սմբատ Ա.ի դուստրը։ Որմնանկարը կատարուել է երկու գահակալների բարեկամական դաշինքի առթիւ։ Սկզբնապէս, 904թ. երկուսի միջեւ ծագել էր գժտութիւն, բայց շուտով կողմերը համաձայնութեան եկան եւ կնքուեց

դաշինք։ Սմբատ Ա.ը արիագաց թագաժառանգին կնութեան տուեց իր դուստրին[21]։

Շալվա Ամիրանաշվիլին մանրամասն վերլուծել է որմնանկարի բովանդակութիւնը, ընթերցել պահպանուած մակագրութիւնները եւ որոշել նկարի պատրաստման ժամանակը։ Երկու թագաւորների միջադէպը տեղի է ունեցել 904ին, իսկ բեմի արսիդից վերեւ գրուած է 906 թիւը։ Ելնելով դրանից Ամիրանաշվիլին նկարի պատրաստումը թուագրում է 904–906 թթ.[22]։

Սմբատ Բագրատունու եւ Բիւզանդական կայսրերի թագերի արտաքին տեսքի համեմատութիւնը մատնանշում է նրանց միատեսակութիւնը՝ Սմբատի թագը նոյնպէս կամարաձեւ է, իսկ ճակատամասի կենտրոնում ունի ական–զարդ։

Կայսերական եւ Հայոց թագաւորի թագերի նմանութիւնը ակնյայտ է։ Մեր համոզմամբ Դրասխանակերտցին յիշատակելով «ականակապ կամար»ը նկարագրել է թագի արտաքին տեսքը, իսկ կարծեցեալ Շապուհ Բագրատունին եւ Օրբելեանը օգտագործել են աւանդական թագ բառը։ Ընդ որում, Օրբելեանը գրելով «Աշոտ կայր ի փախստի առ կայսրն Յունաց։ Որում թագ կապեալ Ռոմանոսի կայսեր՝ յուղարկէ ի Հայս»[23], անշուշտ օգտուել է վաղ շրջանի աղբիւրից։

Աթէնի տաճարի 906թ. կատարած որմնանկարը հաստատում է գրաւոր հաղորդումների իսկութիւնը Բիւզանդական կայսրերի (Վասիլ Ա.ի, Լեւոն Իմաստասէրի եւ Ռոմանոս Լեկապենոս–Կոստանդին Միրանածինի) կողմից Աշոտ Ա., Սմբատ Ա. եւ Աշոտ Բ. հայոց թագաւորներին թագ շնորհելու մասին։ Պարզւում է նաեւ, որ կայսրերի շնորհած թագերը եղել են բիւզանդական տիպի։ Դա շատ բնական է, բայց մինչ այժմ այդ հանգամանքի վրայ ուշադրութիւն չի դարձուել։ Ճիշդ նոյն սկզբունքով խալիֆաները շնորհում էին թագ–չալմաները։

Այսպիսով պարզւում է, որ Աթէնի տաճարի որմնանկարում Սմբատ Ա.ը պատկերուած է բիւզանդական թագով։ Այդ փաստը ընդգծում է այն իրադարձութեան կարեւորութիւնը, որի առթիւ նկարուել է որմնանկարը։

Բիւզանդիայի կողմից Հայոց թագաւորին թագ շնորհելու փաստը կասկածի տակ դնելը, այլ կերպ ասած՝ նրա պետականութեան վերականգնման ժխտումը Կայսրութեան կողմից, զուրկ է պատմական եւ տրամաբանական հիմքից։ Կայսրութիւնը այդպիսի ռազմա–քաղաքական սխալ թոյլ չէր տայ, դա կը նշանակէր նախկին արաբական Արմինիա փոխարքայութեան երկրներին թողնել Խալիֆայութեան ազդեցութեան ոլորտում, այն ժամանակ, երբ այդ երկրները ձգտում էին ազատուել արաբների վերահսկողութիւնից, իսկ Հայաստանը ինքը չահագրգռուած

էր դիւանագիտական կապեր հաստատել կայսրութեան հետ։ Այդ տեսանկիւնից կասկածից վեր է նաեւ Վարդան պատմիչի հաղորդումը Վասիլ կայսեր Արշակունի տոհմից սերելու մասին։ Այդ փաստը հաստատում է նաեւ արաբական մատենագրութիւնը։

Արդարեւ, ժամանակակից արաբ պատմաբան Ադիբ Աս–Սէյիդը վկայակոչում է արաբ աղբիւրի հաղորդումը՝ «Խալիֆը գտաւ որ ամենաընտիր նուէրը որը կարող է ներկայացնել իր ուժեղ դաշնակից Աշոտին, հայ ժողովրդի ցանկութիւնը կատարելն է եւ ընդառաջելը՝ նրան [Աշոտին] թագաւոր Հայաստանի կոչումը տալու եւ հիջրայի 272[ին] (քրիստոնէական 885–886) Վասիլ Արշակունի կայսրը, նոյնպէս, ձեռնարկեց շնորհաւորել իր բարեկամին՝ Աշոտին եւ իրեն ուղարկեց թանկարժէք ընծաներ»[24]։

Այս հաղորդումը կրկնակի արժէք ունի. այն հաստատում է խալիֆից եւ կայսրից Աշոտ Բագրատունու ստացած թագը եւ երկրորդ՝ կայսր Վասիլ Ա.ի Արշակունի ծագումը (որը պատմա–արուեստագիտական գրականութեան մէջ յաճախ անհիմն կասկածի տակ է դրւում)։

Թ. դարի երկրորդ կէսին – Ժ. դարի սկզբին Բիւզանդիան եւ Հայաստանը, պայքարելով խալիֆայութեան դէմ, բնական դաշնակիցներ էին, իւրաքանչիւրն ելնելով իր շահերից։ Բագրատունիները ձգտում էին օգտագործել բիւզանդական գործօնը՝ նրա ռազմական յաջողութիւնները Փոքր Ասիայի արաբ–բիւզանդական սահմանագօտում («Սուղուր»)։ Բայց այդ ժամանակաշրջանում Բիւզանդիան Հայաստանի համար աւելի շատ բարոյա–դիւանագիտական գործօն էր, քան ռազմական, որը կարող էր օգնութեան հասնել հայերին։ Աշոտ Ա.ը խուսափում էր ռազմական ընդհարումներից արաբների հետ, որովհետեւ ստիպուած էր զբաղուել ներքին հարցերով՝ վերականգնել հայ իշխանների քաղաքական կապերի համակարգը, որը խիստ տուժել էր Բուղա ոստիկանի հալածանքների ժամանակ։ Նկատի ունենք ռազմական համագործակցութեան կառոյցը, որը փոխադարձ ուխտ–դաշինքներով կապում էր հայ իշխաններին Բագրատունի աւագանու հետ եւ կոչւում էր «տէրութիւն»[25]։

Պատահական չէ, որ 862ից (երբ Աշոտ Բագրատունին դարձաւ իշխանաց իշխան) մինչեւ 885թ.՝ անկախութեան հռչակումը, հայ–արաբական ռազմական ընդհարում չի եղել։ Դա Աշոտ Ա.ի որդեգրած քաղաքականութիւնն էր՝ անհրաժեշտ էր վերականգնել եւ ամրապնդել այն, ինչ քանդել էր Բուղան, այլ ոչ թէ ընդհարումներով աւելի բարդացնել վիճակը[26]։

Վերջապէս Հայաստանը հասաւ անկախութեանը, բայց կաշկանդուած էր որոշ սահմանափակումներով (դոմինիոնի կարգավիճակ)։ Հասկանալի է Սմբատ Ա.ի ձգտումը՝ ազատուել այդ սահմանափակումներից, բայց զարմացնում է նրա չտապողականութիւնը։ Իրավիճակը դեռեւս

նպաստաւոր չէր շրջադարձի համար։ Սմբատը պէտք է հաշուի առնէր երկու հանգամանք։ Նախ, որ Արծրունիների ռազմական ուժը 908թից յետոյ այլեւս իր հետ չէր։ Երկրորդ՝ Բագրատունի իշխանների մի մասը եւ նրանց հետ կապուած վասալ իշխանաւորներ (Շապուհ Բագրատունու խմբաւորումը), այդ թւում Սիւնեաց Գեղարքունիքի գահակալ Գրիգոր–Սուփան Բ-ը, նոյնպէս իր հետ չէին։ Այդ նշանակում է, որ հայոց թագաւորի բանակը զգալիօրէն կորցնում էր իր զինական ուժը։ Յաւօք, Սմբատը այդ հաշուի չառաւ։ Նա, ինչպէս ասուեց վերը, թերագնահատեց խալիֆայութեան ռազմական ուժը եւ գերագնահատեց կայսրութիւնից սպասուելիք օժանդակութիւնը։ Հետեւանքները յայտնի են։

Սմբատ Ա-ի պարտութիւնը 910թ. ծանր վիճակի մէջ դրեց Հայաստանը, բայց իր արժանի յաջորդը՝ Աշոտ Բ. Երկաթը, գործելով զէնքով եւ խելամտօրէն, կարողացաւ վերականգնել Բագրատունիների «տէրութիւնը»՝ իշխանների ռազմա–քաղաքական դաշինքը Բագրատունեաց տան հետ։ Նրա թագաւորութիւնը ճանաչեց հայ իշխանների ճնշող մեծամասնութիւնը, այդ թւում եւ Աշոտ Շապուհեանի խմբաւորումը։ Վերջինս մնաց մեկուսի իր տիրոյթում։ Արծրունիները եւս զգացին իրենց յաւակնութիւնների բացասական հետեւանքները եւ աստիճանաբար վերականգնեցին յարաբերութիւնները Բագրատունիների հետ, չնայած պահպանեցին թագաւորութիւնը Վասպուրականում։

Սմբատի նպատակն էր աւարտել իր հօր հայրենանուէր գործը՝ ազատուել կապանքներից, որոնք խանգարում էին երկրի լիակատար անկախութեանը։ Նա սխալներ թոյլ տուեց եւ զոհուեց։ Նրա պայքարը աւարտին հասցրեց իր յաջորդը, որի պետական գործունէութիւնը պէտք է ուսումնասիրուի աւելի մանրազնին, քան արուել է մինչեւ այսօր։ Իսկ Սմբատ Ա. Բագրատունին մտաւ հայոց պատմութեան մէջ որպէս խիզախ եւ անձնուրաց գործիչներից մէկը, որը իր նախորդի՝ Աշոտ Ա-ի հետ հիմք դրեց Հայաստանի առաջադիմութեանը Ժ.–ԺԱ. դարերում։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Լէօ, *Երկերի ժողովածու*, երկրորդ հատոր, Երեւան, 1967թ., էջ 492–510։ Հայր Ղեւոնդ Ալիշան, *Յուշիկք հայրենեաց հայոց*, հտ. Ա., Վենետիկ, 1921, էջ 363–463։ Նիկողայոս Ադոնց, «Բագրատունեաց փառքը», *Պատմական Ուսումնասիրութիւններ*, Փարիզ, 1948, էջ 70–86։
2. *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 140։
3. *Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի*, Վենետիկ, 1862, էջ 85–86։ Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք–Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 79, 80։

4. Դրասխանակերտցի, էջ 158, 159:
5. Նոյն, էջ 159, 160:
6. Նոյն, էջ 326: «Հայոց, Վրաց եւ Աղուանից» ասելով պատմիչը նկատի ունի Արմինիան:
7. Խալիֆան Գագիկ Արծրունուն ճանաչեց ոչ թէ Վասպուրականի, այլ ամբողջ Հայաստանի թագաւոր: Սխալ է հայ պատմագրութեան մէջ տարածում գտած այն կարծիքը, թէ իբր 908թ. Գագիկը անջատուեց Բագրատունեաց թագաւորութիւնից եւ հիմնեց Վասպուրականի թագաւորութիւնը: Իրականում Գագիկը ձգտում էր թագաւորել ամբողջ Հայաստանում, այսինքն խլել Բագրատունիներից հայոց թագաւորի իրաւասութիւնները: Միայն Աշոտ Բ.ից պարտուելուց յետոյ նա ստիպուած եղաւ սահմանափակուել Վասպուրականով: Այդ պատճառով 914–921 թթ. (7 տարիների ժամանակահատուածը) որոշ աղբիւրներ անուանում են «անիշխանութեան շրջան»:
8. Դրասխանակերտցի, էջ 199–200:
9. Նոյն, էջ 214, 215:
10. Նոյն, էջ 218:
11. Նոյն, էջ 160, 161:
12. Նոյն, էջ 218:
13. Ինչպէս հայ եւ յոյն եկեղեցիների միութեան հարցը:
14. ***Պատմութիւն Նահանգին Միասական Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց,*** Թիֆլիս, 1910, էջ 192 եւ ***Ստեփաննոսի վարդապետի Տարօնեցւոյ Տիեզերական Պատմութիւն,*** Փարիզ, 1859, էջ 144:
15. Կ. Եուզբաշեան, «Բագրատունեաց շրջանի Հայաստանը՝ միջազգային իրաւունքի տեսանկիւնից», ***Պատմա-Բանասիրական Հանդէս,*** 1975, հ. 1, էջ 33–53. К. Юзбашян, ***Армянские государства эпохи Багратидов и Византия. IX-XI вв.*** М., 1988, էջ. 86, 88:
16. Տես՝ Ռ. Մաթեւոսեան, ***Բագրատունեաց Հայաստանի պետական կառուցուածքն ու վարչական կարգը,*** Երեւան, 1990, էջ 97–99:
17. Տես մասնաւորապէս Տիգրան Գուլումճեան, «Մխիթար Անեցին Ղազնաւեանների եւ սելջուկեանների մասին», ***ԳԱ Լրաբեր,*** 1972, N.4 (352), էջ 75–84: Փայլակ Անթարեան, «Վարդան Արեւելցու ***Պատմութեան*** աղբիւրները», ***Բանբեր Մատենադարանի,*** հ. 14, 1984, էջ 78–103:
18. ***Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ,*** ի լոյս ածին Գ. Տէր–Սկրտչեան եւ Մեսրոպ Եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 65:
19. Դրասխանակերտցի, էջ 158, 285:
20. Նկարները վերցուած են ***Культура Византии, вторая половина VII-XIIвв.*** Москва, 1989, էջ 29, 69, 85, 96, 97, 117, 263, 543, 608, 609, 613: Կոստանդին Ծիրանածնի նկարը վերցուած է Հ. Բարթիկեանի կողմից 1970թ. կատարուած Կոստանդին Ծիրանածնի երկերի հայերէն թարգմանութիւնից (Առաջաբանից առաջ):
21. Դրասխանակերտցի, էջ 200–202: Կարսի Գագիկ թագաւորի ընտանեկան մանրանկարը (Կարսի Աւետարան, ԺԱ. դար) վկայում է, որ այդպիսիք եղել են:
22. Տես Ш. Амиранашвили, ***История грузинской монументальной живописи,*** т. I, Тбилиси, 1957, էջ 95, 96, տախտակ, 81, 83: Որմնանկարի մի հատուածը Սմբատ Ա.ի գծապատկերի հետ տես՝ Ս. Մնացականեան, ***Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը 9–14 դդ.,*** Երեւան, 1976, էջ 43, նկար 39:
23. Օրբելեան, էջ 192:
24. Էտիպ Էլ–Սէյէտ, ***Հայաստան արաբ պատմութեան մէջ,*** Հալէպ, 1972, էջ 146: (արաբերէն): Արաբերէնից թարգմանութիւնը կատարել է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան ինստիտուտի գիտ. աշխատակից Աշոտ Մանուչարեանը, «Հայկական վիմագրերը Հայաստանի քաղաքական պատմութեան սկզբնաղբիւրներ» (9–14 դդ.), Երեւան,

1996, էջ 34 (ատենախօսութիւն):

25. Մաթեւոսեան, էջ 77–86:

26. Աշոտ իշխանաց իշխանը խուսափեց կռուից նոյնիսկ ոստիկան Ահմադ իբ Ռաշիդի դաւադրութիւնը ճնշելիս: Միակ ընդհարումը տեղի է ունեցել 863թ. Կայսիկ ամիրա Զահապի հետ, որ որպէս Մամիկոնեանների փեսայ ձգտում էր տիրանալ Արշարունիքին եւ պարտուեց Աբաս Բագրատունի սպարապետից:

THE FOREIGN POLICY OF SEMBAT I (890-914)
(Summary)

RAPHAEL MATEVOSIAN

The late 9th century and early 10th century was a decisive period in the history of Bagratuni Armenia. It witnessed the restoration of Armenian statehood and its consolidation as an actor in regional politics, conducted by the Byzantine Empire and the Arab Caliphate along with its proxy Emirates. Three Bagratuni kings ruled during this era, Ashot I, (885-890), Sembat I (890-914) and Ashot II (914-929).

The author highlights the foreign policy of King Sembat I, who unlike his predecessor Ashot I developed a stronger alliance with the Byzantine Empire, at the expense of the Arab Caliphate. This alteration incited a reaction on both the domestic and regional fronts. A local opposition, lead by the head of the army, Ashot Shapouhian, and Grigor Soupan, disobeyed Sembat and expressed its loyalty to the Arab Caliphate proxy, Emir Yusuf. On the regional front the Emir of Atropatene, Yusuf, invaded Armenia. Sembat I was badly defeated and killed in the battle of Dzeknavatjar.

King Ashot II, was wise enough to use both diplomacy and arms in restoring Armenian statehood. His input was pivotal to the transition of Armenia from a Caliphate dominion into a sovereign kingdom.